

ՀԱՅՐԵՆԻՔ

Սփյուռքահայությունների հետ մշակութային կապի կուրսների շարափամերթ

«АЙРЕНИКИ ДЗАЙН»
«HAYRENIKY DZAYN»

№ 13

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ԿԻՐԱԿԻ

ԳԻՆԸ 5 Կ.

1965

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս Ե Ր Ը

Մարդկային էության ամենախոր ծախսերից բարձրագույն մեծագույն զգացմունքն է դա, բարձրագույնը բոլոր սերերից: Մայրական կարի հետ է մտնում նա մարդկային էության մեջ, մտնում հայրենի տան նվիրական պատկերով, հայրենի հողի բույրով ու շնչով և արյան պես աննկատելի շրջանառում մարդու երակներով: Եվ որքան հասունանում է մարդ, այդ զգացմունքն այնքան ավելի որոշակի է դառնում, դառնում է գաղափար, և բոլոր ապնով մարդիկ այդ գաղափարի լույսն են առաջնորդ կարգում իրենց կյանքին ու գործին:

Միշտ չէ, որ մարդիկ խոսում են այդ սրբապան զգացմունքից, ինչպես միշտ չէ, որ որդին սեր է խոստովանում մորը: Այդ զգացմունքի լավագույն քարգամանը հաճախ երկյուղած լուրջություն է և միշտ՝ գործը, կենդանի գործը:

Հայրենիքի սերը... Այդ զգացմունքը հայ ժողովրդի հոգևոր հարստության ամենագեղեցիկ գանձերից է: Այդ զգացմունքի մեծության մեջ է նրա գոյատևման գաղտնիքը, նրա բոլոր սխրալի գործերի ակունքը: Ու եթե հզորների բախման ճանապարհին ընկած, բայց միջոց խաչված ու սրահարված Հայաստան երկիրն այսօր կա ու ծաղկումի մեջ է, ապա միշտ այդ նվիրական սերն է, որ նրա անդամաճան կորսվիցն է եղել: Ավարայրից մինչև Մարդարապատ այդ զգացմունքը ոտքի է հանել հայ մարդկանց, համախմբել ու մարտի տարել թվով գերակշիռ թշնամու դեմ: Այդ զգացմունքն է, որ կարծրացել, դարձել է բուռն և եղել առավել կորեղ, քան թշնամու սուրը: Այդ սիրով է հայ մարդը հայրենի հողի վրա միշտ նորոգել իր տունը, սերմանել արտը, կերտել օղորդները, ստեղծել մշակույթը: Ու երբ բախտը հայ մարդուն պոկել է հայրենի հողից ու նետել օտար երկիրների տակ, նա միշտ կարոտով երազել է երկիր հայրենին, իր վերադարձն է երազել, հայրենի ապաստար միշտ գերադասելով օտարի այգուց: Եվ այդ կարոտը սերը նա այնպես լավ է խոսացրել իր միջնադարյան հանձարեղ հայրենիքից մեկուս.

Ես շեֆրեյուի մտն մ'կի,
Ապտամ Բարբ բուսենի.
Նկին, Բաշեցին, Թարին,
Չիս այլոց այգին անկեցին,
Շեֆրեյու այ շեֆրեյու արին
Ու բերին ինձի շեֆրեյու,
Նկին Բ, զիս տեղս տարեկ
Ու ձեռն չուն շեֆրեյու...

Ահա այդ անշահանդիր սերն է, որ հրաշքներ է գործել դարեր շարունակ, իր խոր արմատներով ժայռեր է փշրել ու կենսահյուսք բամբել, բոլոր հողմերի դեմ կանգուն պահել հայոց տունն ու վառ պահել օջախը:

Ահա այդ սերն է, որ նոր մի ուժով դրսևորվեց նոր օրերում, երբ հայ ժողովուրդն իրեն վիճակված պատմական ամենամեծ ողբերգությունից հետո կարողացավ ներքի ոտքի ելնել ու վերակերտել իր փոքրիկ հայրենիքը: Այդ անշահանդիր, ժայռեր փշրող սերն էր պետք, որ ավերակված հայրենիքում վարդազույն քաղաքներ բարձրանային, շրանցքներ ձգվեին ու ստափեին նոր այգիներ: Որդիական այդ սերն էր

պետք, որ օտար ավերից հայրենիք վերականգնային աշխարհով մեկ ցրված նրա զավակներից տասնյակ հազարները և իրենց քարը դնեն վերածնված հայրենիքի կառույցների որմերում: Այդ սերն էր պետք, որպեսզի հազարադարձներն այն բոլոր դժվարություններն ու կրկանները, որ վերաշինվող երկրի հասկանալի ուղեկիցներն էին: Եվ բոլոր նրանք, ովքեր այդ սիրո լույսն ունեն իրենց մեջ, գիտեն, թե հանուն ինչի են անում այդ կոհողությունները, գիտեն, թե հանուն ինչի են գալիս արմատներ նետելու հայրենի հողում: Այդ կոհողությունների, այդ անօրինակ ջանքերի գնով այսօր բարձրացել է մի երկիր, որն արդեն այն ապաստար քար չէ, որին այնպես կարոտով տնչում էր տեղահանված և այլոց այգում տնկված հայ պանդուխտը: Հայրենիքն արդեն այգի է, ճիշտ է, նորատունկ այգի, բայց որի հողն արդեն պարարտ է, և յուրաքանչյուր նոր տունկ կարող է ծաղկավորվել ու առատ բերք խոստանալ: Իսկ բոլոր այն տունկերը, որ հեռու կիսնեն այդ այգուց, ի վերջո, դատապարտված են չորանալու:

Եվ սակայն այսօր գտնվում են մարդիկ, իրենց հայրենասեր հորըրջող մարդիկ, որ օտար այգու գովքն անելով, փորձում են հայ ժողովրդի աստանդական զավակներին հեռու պահել հայրենի հողից, հայրենի այգուց: Այդ կան աղափսիք, որ փերեզակների նրման կշեռն ու չափը իրենց առջև դրած, կշռում ու չափում են, թե ո՞ր այգուս են, արդյոք, ավելի նյութական բարիքները՝ օտար, թե հայրենի: Ու գանձելով, որ օտար այգուս ավելի են, սփյուռքահայությանը խորհուրդ են տալիս հեռու մնալ հայրենիքից: Այդ քաղաքական փերեզակներից չէ՞ն արդյոք Բեյրութում լույս տեսնող «Սփյուռք» շաբաթաթերթի խմբագրատանը նստած մարդիկ, որ իրենց թերթի այս առավա օգոստոսի 18-ի համարում տպագրել են «Երկու նամակներ» խորագիրը կրող մի խմբագրական, որով, «Ջարբոնք» թերթի «Սփյուռքի» խմբագրության մարդկանց «հակահայաստանյան լրագրության մեջ նոր էջ մը կբացվի... ոճրային հանցանք երևան բերելով»:

Այդ խմբագրականում մեջ են բերված երկու նամակ մեկը ստացված Ավստրալիայից, մյուսը՝ Հայաստանից: Առաջինի մեջ Ավստրալիայի գովքն է և անհավաղ այնտեղ գաղթելու խորհուրդ, երկրորդի մեջ՝ «Չլլա որ գար... գացե՞ որ ի՞նչ տեղեր»:

«Ջարբոնք» թերթը Հայաստան այցելած, հայրենի երկիրը տեսած իր բողբակցի միջոցով այնքան լավ է պատահանել այդ խմբագրականին, որ ավելորդ չի լինի մի բազմաթիվ բերել այնտեղից:

«Վարդալե ետր այս երկու մեջբերումները, պահ մը լուռ խորհրդածոցեր և երևակայեցեք հայաստան թերթի խմբագիր մը, ինքզինքին ժողովուրդ առաջնորդողի դեր տված հրապարակագետ մը, հայկական գերագույն ու մնայուն շահերը հետապնդելու պարտքին տակ գտնվող մտավորական մը, որ յուրաքանչյուր այս նամակներում բովանդակությունը ն... ատով «սատարե» ազգապահպանության նվիրական գործին»:

«Նարավոր է, այո, որ Հայաստանից գրված լինի նման մի նամակ, այդ ո՞ր երկրում է, որ չկան զձգոն մարդիկ, հնարավոր է նաև, որ Ավստրալիայում հայ ընտանիքը բարձր կենսամակարդակ ապահովված լինի իր համար: Հնարավոր է բերել նաև բազմաթիվ հակառակ փաստեր, ցույց տալու, որ արտասահմանից Հայաստան ներգաղթած բազմաթիվ ընտանիքներ, որոնք շատ աղքատիկ բեռ ու պաշարով էին եկել հայրենիք, այսօր բարեկեցիկ կյանք են ապահովել իրենց համար: Բայց մի՞թե բարձր գաղափարը, որի անունից, փրկվորը բերնին այնպես գեղեցիկ են ճառում այդ երկու նամակներն ի մի բերող և դրանցով սփյուռքահայությանը կողմնորոշել ցանկացող մարդիկ:

Հայրենասիրությունը, այո, այն զգացմունքն է, որի լավագույն քարգամանը գործն է, կենդանի գործը... Այս անգամ ես նա ճիշտ է քարգամում «Սփյուռքի» խմբագրության մարդկանց «հայրենասիրության» բուն էությունը, ըստ որի մտքը սէտք է սիրել և նրա գիրկը վերադառնալ միայն այն դեպ

բում, երբ նյութական ստավել բարիք են ակնկալում նրանից և այդ նյութական բարիքը նախօրոք կշռել ես փերեզակի կշեռով:

Իմաստուն է հայրենի երգը. «չեղպեք» իսկ ի վիճակի չէ դալար պահելու մայր հողից պոկված ու այլոց այգին տարված տունկը: Այդ չէ՞ն հաստատում արդյոք այն փաստերը, որ հայկական շատ գաղթեցյալներում նոր սերունդն արդեն կորցրել կամ կորցնում է մայրենի լեզուն ու կույ գնում ուժացումին: Բայց ահա նա, ով մտնի Հայաստանի դպրոցներն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները, տեսնի հայրենադարձների մտնկներին ու պատանիներին, լսի նրանց հայաշունչ խոսքը, պատկերացնի նրանց ապագան, ամբողջ խորությամբ կհասկանա հայրենիքի պատկերը սփյուռքահայության սրտում աղարտողների «ոճրային հանցանքը»:

Հայ ժողովուրդը ստեղծագործ աշխատանքով, համբերությամբ ու հետևողականությամբ կերտում, շենացնում է իր մայր հայրենիքը, առավել բարեբեր դարձնում իր նվիրական այգին: Կգա ժամանակ, երբ նա ավելի լայնորեն կբանա իր այգու դուները տարագիր հայության առաջ: Սփյուռքահայությունը, որի էության մեջ միշտ անմար է բոլոր սերերից բարձրագույնը՝ հայրենի հողի սերը, այն մեծ զգացմունքը, որ հայ ժողովրդի գոյատևման գեղեցիկ գաղտնիքն է, հակառակ քաղաքական ամեն տեսակի փերեզակների, մի վերջին անգամ կասի.

Նկին Բ, զիս տեղս տարեկ
Ու ձեռն չուն շեֆրեյու...

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն ՊԵՆԿԵՏԸ


Առգրածի ստեղծում վեր են բարձրացել ստիֆակեր շեֆրեյու: Գրանել «Առգրածի պեղիս» գործառնի արտագրամատեր են, որով պեղիս է շահագործման հանձնվեց բերացիկ տարում: Ժամանակակից ստեղծագործությունը հարկված ետեղադաս այս հակառակ ամեն օտար երկիրն կառ 250 հազար տաննա կտրված պեղիս: Կազմակերպվում է նաև հասակ տեղամաս փված պեղիսի արտագրության համար: Ետ գործառնի, հանրագրության պահանջներ բավարարելուց բացի, մեծ հանակությանը ստեղծառնել է առակու Մասիկա, Անիկազաղ, Օրկա, Կիկ, Քրիիիի-Կայրիի:

Հայկական պեղիսը մեծ պահանջակ ունի նաև արտաստեղծում: Օրկուկ, Ի-ապիան պեղիսի հանձնադրեր աննցող երկիր է, բայց իտալացի նեանադատերը գերազանց են պեղիս նեանուն Հայաստանից եվ ահա երկուց տարի է, ինչ Առգրածի նեանադարյունը պեղիս է մտանկարտում իտալական «Կեկալու» ֆերմային Առկեն կեկվա է մի կանի հազար տաննա յոյամանադի: Եվ ոչ օտար այդ թիվը կմեծանա:

Հայաստան երկիր մի Կարաստակ ետ մեծ հանազան է զուտ գալիս:




ՀԱՅՐԵՆԻ ՀՈՎԻ ՎՐԱ: Կուսակար՝ Ա. ԲԱԳՎԱՅԱՆԻ



ԲԱՂՐԱՄՅԱՆԷ

այսպէս կ'ըսենք



Մեծաւուն պորավար Հոգանսէս Բաղրամյանը վերջերս կրկին այցելեց Հայաստան, շրջագայեց բաղրամյաններում ու գյուղերում, ծանոթացավ այն հեթաբային վերափոխումներին, որ վերջին տարիներին տեղի են ունեցել հարապատ ժողովրդի կլանքում:

Տղերիս հեղինակին բախտ էր վիճակվել մեկ շաբաթվա ընթացքում ուղեկցել հայրենասեր պորավարին, հաղորդակից լինել նրա մտքերին ու ասորումներին:

Հոկտեմբերի 8-ի առավոտյան դուրս գալով Երևանից, մեր ավտոմեքենաներն ուղղություն վերցրին դեպի հարավ-արևելք: Քաղաքային մոտով անցնելիս, Բաղրամյանը հիշեց, որ 1918 թվականին իր դասակը մոտ մեկուկես ամիս մնացել է այդ գյուղում:

— Այդ ժամանակ, — ասում է պորավարը, — որ ինձ բախտ վիճակվեց իմ հեծյալ միավորումով մասնակցել Սարգարաբաղի ճակատամարտին:

Նոր էինք դուրս եկել Արտաշատից, երբ բանկազին հյուրին դիմավորեցին Վեդու աշխատավորների ներկայացուցիչները: Նրանց ուղեկցությամբ շարունակելով իր ճանապարհը, պորավարը հիանում է աչ ու ձախ փոված մրգի և խաղողի այգիներով, հետաքրքրվում, թե ինչպիսի բերք է ստացվում, և թե առհասարակ ինչպես է ապրում հայ գյուղացին:

Անցնելով Նոր կյանք գյուղով, Բաղրամյանն իմանում է, որ տեղի բնակիչները մոտ 20 տարի առաջ գալով Երանից, այժմ իրենց համար ստեղծել են բարեկեցիկ կյանք:

Ջորավարին պատմում են այն աշխատանքների մասին, որ տարվում են նոր հողերի, հատկապես աղուտների յուրացման ուղղությամբ: Այդպիսի անմշակ հողերի վրա էլ վերջին մի քանի տարում ստեղծվել են Սուրենավանի և Արմաշի խոշոր տնտեսությունները:

Արմաշում պորավարին հյուրասիրում են անուշահամ մրգերով: Այստեղ նա հանդիպում է սովետական տնտեսության բրիգադավար, խարբերողի Ասատուր Անտոնյանին, որը 1930 թվականին ծառայել է իր հեծյալ գնդում:

Նախկինում պորավար Բաղրամյանը դիտում է քաղաքը, ծանոթանում գավառագիտական բանագրանի ցուցաններին, այցելում Կոնված ասիամասնականների եղբայրական գերեզմանը:

Կարճատև հանգստից հետո մենք շարունակում ենք ճանապարհը Արաբսի ամրով: Սրբուբաղ շիասած, ավտոմեքենաները թեքվում են և ուղևորվում դեպի լեռնային Չանանար (նախկին Յոնա) գյուղը, ուր ծնվել է Բաղրամյանի կինը՝ Թամարան:

Անկարագրելի է, թե ինչ ցնծություն առաջ բերեց պորավարի հայտնվելը այս փոքրիկ հայկական գյուղում, որտեղ շատերն անձամբ ճանաչում են նրան: Յուրաքանչյուրն ուզում էր հյուրասիրել, ընդունել իր հարկի տակ:

Ջորավարին հայրաքար գրկում և համբուրում է 95-ամյա Սարգիս Դավթյանը: Նրա հարկի տակ էլ տեղի է ունենում ճոխ հյուրասիրություն:

Մոտ երկու ժամ գյուղում մնալուց հետո Բաղրամյանը հրամեշտ է տալիս իր վաղեմի ծանոթներին:

Մեղրեցիները բանկազին հյուրին դիմավորեցին ավանդական սովորությամբ, ապաչին տարազ հագած երկու աղջիկներ պորավարին մատուցում են մեղրահամ մրգեր ու զինի, պիտներները՝ նվիրում ծաղիկեփայլեր:

Հաջորդ առավոտյան Բաղրամյանը շարունակեց ծանոթանալ Մեղրուն, ուղևորվեց դեպի Ագարակի պղնձ-մոլիբդենային կոմբինատը, այցելեց հանքերը, որտեղ բաց եղանակով արդյունահանում են բանկարծեք մետաղը:

— Մեղրեցիները, — ասաց նա, — մարմնավորում են մեր ժողովրդի բացառիկ աշխատասիրությունը: Խիստ սակավահողության պայմաններում նրանք կարողացել են շունչ տալ լեռի ժայռերին, յուրացնել յուրաքանչյուր քիչ հողը, այն շահախել սեփական քրտինքով և իրենց համար բարեկեցիկ կյանք ստեղծել:

Հայաստանն իր տարածությամբ սովետական եղբայրական հանրապետություններից ամենից փոքրն է: Սակայն ձեր օրինակը ցույց է տալիս, որ փոքր հողի վրա էլ կարելի է մեծ գործեր կատարել: Հիացած եմ ձեզ նման, հիացած եմ ձեր աշխատասիրությամբ:

Արևաշատ Մեղրուն հրամեշտ տալով, պորավարը գնացքով ուղևորվում է Ղալան: Հանրապետու-

րյան լեռնա-հանրային արդյունաբերության այդ խոշոր կենտրոնի հապարավոր բնակիչներ ցնծությամբ են դիմավորում ցանկալի հյուրին: Ղալանից ուղևորվում ենք Քաջարան, պորավարն այցելում է հարստացուցիչ ֆարրիկան, դիտում Դավիթ-բեկի բերդի մնացորդները, հիանում Սյունյաց լեռների անկրկնելի գեղեցկությամբ:

Պե՛տ Գորիս չհասած, Որոտանի կիրճից ոչ հեռու, պորավարին դիմավորեցին Քարահունջ գյուղի աշխատավորները: Նրանք ճանապարհի եզրին սփռոց էին բացել, պորավարին պատմելու համար: Հյուրի խնդրանքով, ներկաներից մեկը երգեց գուսան Աշոտի «Սյունյաց սարեր»-ը:

Հաջորդ առավոտյան ճանապարհը ձգվեց դեպի Տաթև: Ջորավարն այցելում է Տաթևի էլեկտրակայանի շինարարությունը, ծանոթանում հիդրոտեխնիկական այդ եպակի կառույցին, որտեղ Որոտանի ջրերը, կատարելով 560 մետրանոց առեկի մի թոխք, պետք է լույսի ու պորության վերածվեն: Տաթևում պորավարը դիտում է պատմական հուշարձանները:



Հիանալով անձեռակերտ կորոզով՝ Սատանի կամրջով, Բաղրամյանն ասում է, որ անհրաժեշտ է կինոնկարներ, գունապարզ արձաններ, հանրամատչելի գրքեր ստեղծել՝ նվիրված Հայկական լեռնաշխարհի գեղեցկություններին: Ջանգելուրի բնությունը կարող է գայթակցեցնել ամենաներբաճաշակ պրոնաչքիկին անուշամ:

Վերադառնալով Գորիս և հանդիպում ունենալով քաղաքի աշխատավորության հետ, պորավարն ուղևորվում է Սիսիան: Այստեղ նա մոտ 35 տարի առաջ է եղել: Ու որտեղ էլ լինում էր պորավարը, ամենուր նախկին պիկորների ու մարտական ընկերների էր հանդիպում: Հատերի մասին ինքն էր առաջինը հարց ու փորձ անում, հետաքրքրվում նրանց ճակատագրով:

Սիսիանում պորավարը գրկում և համբուրում է Հայրենական պատերազմում Կոնված գնդապետ Աշոտ Սարգսյանի մորը:

— Աշոտին ես անձամբ ճանաչում էի 1921 թվականից, — ասում է Բաղրամյանը: — Մինչև 1932 թվականը նրա պիկորական ծառայությունն ընթացել է իմ աչքի առաջ, հայկական հրաձգային դիվիզիայի հեծյալ գնդում: Աշոտն իմ աչքին էր: Նա շնորհալի և խիպախ սպա էր, հայրենասեր, անձնվեր ու կարեկից ընկեր: Երբ 1941 թվականի հուլիսին նա կոնվեց, ես հարավային ռազմաճակատից մեկնեցի Կին և կապակերպիցի նրա բաղուն: Աշոտի նման հերոսներին մեր ժողովուրդը երբեք չի մոռանա:

Բաղրամյանի միջնորդությամբ է, որ Սիսիանի շրջանի նախկին Աղբենդ գյուղը, որտեղ ծնվել և

ՍՓՅՈՒՌ-ԲԱՎԱՅՈՒՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՍՊԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ
Ավյուրաբանության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանի և Հայաստանի գրողների միության առաջին քարտուղար էդ. Քոփչյանը, որոնք մեկ ամիս հյուր էին Ֆրանսիայում, օրերս քաղաքային հասարակության հետ մշակութային կապի կոմիտեի ղեկավարում, ուր հավաքվել էին մի խումբ մատուցողականներ, պատմելիս ֆրանսուսաճայ տարրեր կազմակերպությունների, մշակութային գործիչների ու արվեստագետների հետ ունեցած իրենց ճանդիպումների, ֆրանսուսաճայ գաղութից իրենց ստացած արվարձանայինների մասին:

մեծացել է Աշոտը, 1948 թվականին պատվանվել է Աշոտական:

Ջորավարը եղավ նաև Ջերմուկում, այցելեց Կեչուտ գյուղի մոտ գտնվող Արփա-Սևան բունելի շինարարության գլխամասը: Այստեղից պետք է սկիզբ առնի մոտ 49 կիլոմետր երկարություն ունեցող այդ ստորգետնյա ջրանցքը, որը ջրի նոր պաշարներ կտանի դեպի Սևան: Տեղամասի պետ Նիկոլայ Գևորգյանը հանգամանորեն ծանոթացնում է իրենց շինարարական ծրագրերին:

— Որքան հնարավոր է, պետք է արագացնել շինարարությունը, Սևանը սպասում է Արփայի ջրերին, — ասում է պորավարը:

Ընդամենը ինը տարվա պատմություն ունի Ավիլբեկով ավանը՝ նույնանուն շրջանի կենտրոնը: Այդ կարճ ժամանակամիջոցում Արփա գետի աջ ափին կառուցվել է ժամանակակից մի փոքրիկ քաղաք՝ իր գեղեցիկ փողոցներով, բարեկարգ տնեքով ու հասարակական շենքերով: Տեսնելով այս բոլորը, Բաղրամյանն ասում է.

— Այս վայրերով ես անցել եմ երեքուկես տասնամյակ առաջ: Տեսել եմ միայն վիշտ ու տառապանք: Այժմ կարծես մի նոր աշխարհ եմ ընկել:

Պատասխանելով ավիլբեկովցիների խանդավառ ողջույններին, նա ասում է.

— Ես անչափ ուրախ եմ, որ ձեր ղեմքին միայն խինդ ու գոհունակություն եմ տեսնում:

Մեր նախնիները միայն երապել են նման կյանք: Երկրորդ համաշխարհային պատերազմը, — շարունակում է պորավարը, — միակ պատերազմն էր, որի գնդակները չսուղեցին հայկական լեռնաշխարհում... Բայց հայ ժողովրդի շատ կավակներ հերոսաբար ընկան, փակելով թշնամու մուտքը Հայաստան: Նրանցից էր ձեր հայրենակից գեներալ-մայոր Քրիստափոր Ալավերդյանը, որի հետ ես ընկերություն եմ արել: Լսել եմ, որ որոշել էր կանգնեցնել նրա արձանը: Հատ իմ եր անում:

Հերոսներին երբեք չպետք է մոռանալ:

Կենտրոնական փողոցի ամբողջ երկարությամբ, որը կրում է Ստեփան Հախումյանի անունը, յուրաքանչյուր ընտանիք իր տան առջև ճոխ սեղան էր բացել հյուրի համար: Տեսարանը հուպի էր ու գեղեցիկ: Ժողովուրդն արժանի հարգանք էր մատուցում իր պանծալի կավակին:

Նոր էինք հեռացել Ավիլբեկովից, երբ աղ ու հացով, մի քիչ խաղողով պորավարին ընդատառեկան եղեգնաձորի շրջանի աշխատավորները՝ սոցիալիստական աշխատանքի յոթ հերոսների գլխավորությամբ: Բաղրամյանը համբուրվում է հերոսների հետ, ցանկանում նրանց նորանոր հաջողություններ ի փառս մեր հայրենիքի:

Եղեգնաձորում Բաղրամյանը հանդիպում և գրկախառնվում է գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանի հետ, որը որպես հայ-չեխոսովակյան ընկերության նախագահ ուղևորվում էր Չեխոսովակիայից ժամանած հյուրերին, որոնք ճանապարհորդում էին Հայաստանի պատմական հուշարձաններն ուսումնասիրելու նպատակով: Նրանցից հայագետ Չերնի Վազյալը մարշալ Բաղրամյանին ողջույնի ջերմ խոսք է ասում հայերեն լեզվով:

Այնուհետև պորավարը լինում է Մարտունիում, ծաղիկներ դնում Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանին, ուղևորվում է Գլիչյան, դիտում այդ նշանավոր առողջարանը:

Վերադառնալով Երևան, պորավարը այցելում է Ջվարթնոց, դիտում Հովհաննիսյանի վանքը, Մայր տաճարը: Մեծանուն պորավարին ընդունեց ԱՄԵՆԱՅԻՆ Հայոց-Կաթողիկոս Վազգեն Առաջինը: Ընդունելությանը ներկա էր ուսմանահայ նշանավոր պատմաբան և բանասեր Հ. Սիրունին:

Արտավարդ ջերմությամբ անցավ Բաղրամյանի հանդիպումը Էջմիածնի շրջանի Ծաղիկունք, Մուղան, Արշալույս և Դոդո գյուղերի աշխատավորների հետ:

— Հայ ժողովուրդը, — ասաց մարշալը, — միշտ էլ եղել է աշխատասեր, բայց արել է չարքաշ, որովհետև հայաձվել է օտար նվաճողներից: Անհրաժեշտ էին նպաստավոր պայմաններ, որպեսզի նրա ստեղծագործ հանձարը փայլեր ամբողջ ուժով: Այդպիսի պայմաններ ստեղծվեցին սովետական իշխանության տարիներին, Հայաստանը վերածընվեց և կերտում է մի գեղեցիկ, մեծ արագա:

Հոկտեմբերի 16-ին Սովետական Միության պորավար Հովհաննես Բաղրամյանը մեկնեց Մուղլա, իր հետ տանելով հարազատ ժողովրդի անհուն սերն ու բարեմաղրությունները:

ԱՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆՆԵՐԸ

Հայաստանում հաշվվում են ֆիզիկո-քիմիական և ջերմաբուժական ամենատարբեր հատկություններ ունեցող ալիքի բան 400 հանրային ջրեր:

Կորջին տասնամյակների ընթացքում նրանցից շատերը ենթարկվել են բազմակողմանի գիտական հետազոտություն:

Նեկողորհական հիվանդություններ ունեցողներին:

Ջերմուկ առողջարանն ամեն տարի սպասարկում է մոտ 4.500 հիվանդներին, իսկ ամբուլատոր բուժման համար ալիքի բան 600 մարդու:

Լեռնային սլավոնները, արեգակի ուլտրամանրալույսի ճառագայթների առկայությունը, հրաշալի ջուրը բարենպաստ ազդեցություն են ունենում մարդկանց օրգանիզմի վրա: 26-օրյա բուժումից հետո հիվանդները դադարում են ցավեր զգալուց, նրանց ախտածակը լրիվ վերականգնվում է, տրամադրությունը բացվում, բորբոքային երևույթները անհետանում են, վերջավորությունների շարժունակությունը վերականգնվում է, և նրանք այստեղ թողնելով իրենց հենակներն ու ձեռնափայտերը, առողջացած տուն են վերադառնում:

Ջերմուկի հանրային ջուրն օգտագործվում է նաև խմելու համար: Այդ նպատակով կառուցվել է խոշոր գործարան, որը տարեկան արտադրում է 42,5 միլիոն շիշ ջերմուկ: Անցյալ տա-

րի 1,5 միլիոն շիշ ուղարկվել է Իրան, Իրաք, Քուեյթ, Կանադա, Գերմանիա, Ավստրալիա և այլ երկրներ:

Արգինի գտնվում է նրանից 23 կիլոմետր հյուսիս, Հրազդանի գեղատեսիլ ձորում, ծովի մակերևույթից 1.250 մետր բարձրության վրա: Նրա հանրային բուժիչ ջրերը բարձր արդյունք են տալիս ստամոքսի ցածր թթվայնության, նյութերի փոխանակության, սիրտ-անոթային, աղեստամոքսային, լեղապարհի ու նյարդային համակարգության հետ կապված որոշ հիվանդություններ բուժելու: Սրտի հիվանդությունների բուժման տեսակետից Արգինին ոչնչով չի գերում Կիսլովոդսկի առողջարանին:

Գիլիջանը ունի մեղմ կլիմա, արեգակի առատ լույս և հրաշալի անտառներ: Այստեղի բնական սլավոնները նկատելի առավելություններ են տալիս Գիլիջանին այնպիսի հոշակավոր բուժավայրերի համեմատությամբ, ինչպիսիք են Արասբումանը, Տերեղանը, Գալուսը: Տարվա բոլոր եղանակներին Գիլիջանում բուժվում են թոքերի, գեղ-

ձերի, ոսկորների, խոռոչային բազմաթիվ հիվանդություններ ունեցողները:

Բր բնական և կլիմայական առանձնահատկություններով բացառիկ ուշագրություն է արժանի Սևանա լճի ալպալանը, որը վեր է ածվում մանուկների բուժման և հանգստի խոշոր վայրի: Ալպալանի շահագույն ճառագայթների առատությունը, ճառագայթների որոնք կարևոր դեր են խաղում օրգանիզմի կենսական պրոցեսներում, ուժեղացնում են թթվածնային սնուցումը և բարելավում նյութափոխանակությունը, բարերար են մանկական աճող օրգանիզմի, սակավարյուն, թույլ կամ ներվային մարդկանց համար:


Հաշի առնելով այս բոլորը, Հայկական ՍՍԽ Միներալների սովետը հատուկ որոշում ընդունեց Սևանի ափին պիտեռական մեծ ճամբարներ կառուցելու մասին, որտեղ միանգամից կարող են հանգստանալ մի բանի հազար երեխաներ: Ճամբարների շինարարությունն սկսվել է:

Մեծ հեռանկարներ ունի Հանրային բուժավայրը, որ գտնվում է Մարմարիկ գետի գեղատեսիլ հովտում:

Ջրաֆի հետաքրքրություն է ներկայացնում Արաքսի հովտում գտնվող Արաքս բուժավայրը: Մոլի մակերևույթից 800 մետր բարձրության վրա, Սարիբուլաղ լեռան հարավային լանջերին և գետի հովտում կան 30-ից ավելի հանրային աղբյուրներ, որոնց ջերմաստիճանը հասնում է 25-ի: Արաքսի հանրային ջրերը պատկանում են հիդրոկարբոնատ-ածխածնային-կալցիումական ջրերի թվին, որոնք օգտագործվում են ծայրամասային նյարդային համակարգության, հոդային հիվանդությունների, նյութափոխանակության խանգարման բուժման համար:

Մաղկաձորում են գտնվում տասնյակ պիտեռական ճամբարներ, մանկական առողջարաններ, հանգստյան տներ և այլ առողջապահական հիմնարկներ, որտեղ ամեն տարի 10 հազարից ավելի երեխաներ են հանգստանում ու կազդուրվում:

Հ. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ



Արգինի առողջարանը:

Լուսանկար՝ Վ. ԱՄԱՆՅԱՆԻ

Արշապատքեր ԱՍԽԱՏԱՆԱԿՈՒՄԻՆԻՅԻ

Կշնորհավորենք «Հայրենիքի ձայն»-ի հրատարակությունը: Իրապես սրանչելի գաղափար մըն է, որ գործի կվերածվի, կենդանի կապ մը հանդիսանալով հայրենիքի և սփյուռքի միջև:

«Հայրենիքի ձայն»-ի հրատարակությունը մեծ բաց մը կգոցե: Այսպիսի թերթի մը անհրաժեշտությունը կզգացվեր երկար տարիներին ի վեր: Աշխարհի չորս ծագերուն ցրված հայկական հոծ բազմություններ այս հրատարակության միջոցով իրենց աչքերը պիտի դարձնեն դեպի մայր հայրենիք, իրենք պիտենք պիտի զգան իրավ հայեր, հայրենիք ունեցող հայեր: Հայրենիքի մեջ կատարվող որևէ հառաչողություն իրենց կուրծքերը պիտի լեցնե հրապարտությամբ և անոնք իրենց գլուխը պիտի պահեն բարձր, վե՛ս ինչպես Մասիսը:

Հայեպի գարեջուրի ֆաբրիկայի մեջ աշխատող հայ տղա գործավորներուն անունով կշնորհավորենք

«Հայրենիքի ձայն»-ի երեվումը և կմաղթենք, որ անխափան շարունակվի անոր հրատարակությունը՝ հյուսիսային աստղի նման ուղղություն տալու ուղեկորույս հայ բազմություններուն, մինչև որ բախտավոր օր մը հայությունը ամբողջ հավարվի Արարատի շուրջ:

Բարևներով
Գործավորներու կողմե
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԱՆ
Հայեպ

Ռինչ այնքան սրտապընդիչ է և հոգեցուցնող տարագիր հայրենասերներու համար, որքան «Հայրենիքի ձայն»-ի միջոցով մեզի հասնող հայրենի ձայնը:

Հոգեպարար է «Հայրենիքի ձայն»-ը, որ ամեն շաբաթ կհասնի մեզի, կպատմե մեր մայր երկրի ծաղկումս, նորակառույցներուն մասին, մեզ ամբապես կկապե հայրենի շինարար և քստեղծագործող ժողովուրդին:

Երջանիկ ենք, որ այսօր ապատ հայրենիք մը ունինք, մեր երապած հայրենիքը, ո-

րուն ամեն տարի արձանագրած վերելքը հպարտություն կներշնչե աշխարհի չորս անկյունները կայր հաստատած հայորդիներու:

Իմ բաղձանքս է, որ հայրենիքին մեջ տիրող խաղաղությունը չվրդովվի, որպեսզի վերելքի բապը չըկտրի, և աշխարհով մեկ ցրված հայությունը օր մը կարենա վերամիավորվի իր հայրենի հողին վրա:

Հաջողություն ձեզ, հայրենակիցներ, ամեն շաբաթ անխափան մեզի հասցուցեք «Հայրենիքի ձայն»-ը:

ԵՂՆԱ ՍՈՒՎԱՐԳ
Կրենստըն
ԱՄՆ

Հայ գաղափարի ներկա պայմաններուն մեջ, ուր հայ ժողովուրդի լինել-չլինելության հարցը օրակարգի վրա է, երբ սպիտակ ջարդը կսպառնա մեզի, «Հայրենիքի ձայն»-ը փերկարար դեր մը պիտի կատարե:

«Հայրենիքի ձայն»-ը պիտի հանդիսանա այն շողկապը, որ գաղթօջախները պիտի կապե հայրենիքի հետ: Այս մեծ առաքելության մեջ մեզի բոլորիդ հաջողություն կըմաղթենք:

ԳՐԻԳՈՐ ԹԱԹՅԱՆ
Կորդոբա
Արգենտինա

Հույսից է սփյուռքահայության հանդեպ այն սերն ու գուրգուրանքը, որ կզգացվի «Հայրենիքի ձայն»-ի էջերեն: Հույսից է ու վարակից: «Հայրենիքի ձայն»-ը երգն է հայրենիքին, անոր մշակույթին ու շինարարության երգը: Ան մեր հայրենիքի կենսաբաբախ սրտի ջերմությունը կբերե մեզ՝ ձուլումին վտանգը հեռացնելու ապնիվ նպատակով:

Ամենաջերմ բյուր մաղթանքներ մեր այս սոր ու զեղեցիկ ձեռնարկին:
ԶԱՐԵՀ ՄՈՒԹԱՅԱՆ
Ֆրանսիա

ՕՐՐՈՒՄ ԵՆ Դայրենասիրային

Երկար տարիներ օտար, ամայի ճամփաների վրա զեղբերեցինք, շատ դժբախտ օրեր անցկացրինք և միշտ որպես վերջին սպավեն երազեցինք մեր հայրենիքը վերածնված:


Վերջապես բախտը ժողովուրդի մեջ: 1962 թվականին մեր մեծ բնական ճամփան, ևս և վեց զավակներս եզրիպատուց վերադարձանք մայր Հայաստան, և մեր վերջնական և ապահով կայանը դարձավ զեղեցիկ, օրեցօր ծաղկող Կիրովական քաղաքը:

Արդարև, ինչպիսի մեծ երջանկություն է տեսնել, որ թո հարազատ քաղաքը հարստանում է նոր շենքերով, գործարաններով, փողոցներով, դպրոցներով, զբոսայգիներով: Երջանկու-

թյուն է գիտակցել, որ ոչ ոք բաղադրի տերք մենք ենք, մեր զավակները:

Մենք հպարտ ենք մեր հայրենիքով: Նա դարձել է սփյուռքահայության փարոսը լուսավոր, դարձել է աշխարհի ճամփաների վրա սքանչելի ճամփաներ տուել կանչող, նրանց ճիշտ ճամփա ցույց տվող աստղը լուսատու: Քարավանները աշխարհի բոլոր ճամփաներից շարժվում են զեպի Հայաստան, զեպի մայրական ջերմ գիրկը իրենց դարավոր հարևանների: Նվ բազում հայրենակարոտ հայեր, թոթափած իրենց վրայից օտարություն փոշին, ոտք են դրնում մեր սրբազան հողի վրա, նրանով հզորանալու:

ՕՐՐՈՒՄ ԵՆ
Կիրովական



Հարյուր հազար հին գիտնական փաստաթղթեր: «Ամենածն» մագաղաթյա պատահիկները գալիս են հինգերորդ դարից, ամենաերիտասարդները 18-րդ դարից: Ամենահին թղթյա ձևագիրը գրված է 981 թրվականին:

Ինչքան էլ որ անհանգիստ է եղել հայաց կյանքը, այնուամենայնիվ, մեր երկրում դարգացել են գիտության ու արվեստի բազմազան ճյուղեր, գոյություն են ունեցել բազմաթիվ դպրոցներ, իսկ գրչության վայրերի թիվը միջնադարյան Հայաստանում անցել է հազարից: Մատենադարանում պահվում են հին հայ գիտնականների ու մատենագիրների ոսկե ավանդները պատմության, փիլիսոփայության, երաժշտության, դավանաբանության, իրավաբանության, մաթեմատիկայի, բժշկության, ալքիմիայի և զանազան այլ մասնագիտությունների գծով, իսկ շնախարհիկ մանրանկարներով դարդարված մատյաններն

Համաշխարհային գիտության համար առանձնահատուկ նշանակություն ունեն մանավանդ այն թարգմանությունները, որոնց բնագրերը կորել են: Մատենադարանում է պահվում, օրինակ, չորրորդ դարի հույն խոշորագույն պատմիչ Եվսեբիոս Կեսարացու կորած «Ժամանակագրության» հայերեն թարգմանությունը, անվանի փիլիսոփաներ, դավանաբաններ Զենոնի, Փիլոնի և շատ ուրիշների երկերի թարգմանությունները: Այսպիսով, հայերեն թարգմանությունների միջոցով գիտությանը հայտնի են զանազան ժամանակին մեծ համբավ վայելած և հետագայում անհետացած բազմաթիվ կարևոր աշխատություններ:

Չարմանալի չէ, որ արևմտյան տարրեր կողմերից Մատենադարան են գալիս ոչ միայն հետաքրքրասեր այցելուներ, այլև մասնագետ գիտնականներ: Մատենադարանի սրահներում հայ գիտնականների կողմից մեծարժանատի մատյանների վրա խոնարհված հաճախ կարելի է տեսնել Մովսեսիան Միտիլանայից, Անգլիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ռուսիայից և այլ երկրներից գործուղված գիտնականների, որոնք հայկական ձեռագրերում որոնում են իրենց հետաքրքրող նյութեր: Չարմանալի չէ նաև այն, որ արտասահմանյան մի շարք համալսարաններում այժմ գոյություն ունեն հայոց լեզվի, գրականության ու պատմության դասընթացներ, որոնց միջոցով օտար մասնագետները պատրաստվում են կարգալ մեր մատյանները մեր լեզվով:

գրեն, այնքան թանկ է գնահատել կրթությունն ու լուսավորությունը: Պետական բանակները չէ, որ պաշտպանել են հայ մշակույթը — Հայաստանը մահուց է զրկված եղել իր պետականությունից ու բանակից — շարքային հայ մարդն է փրկել մագաղաթները, երես իրավացի է հունշարացի նշանավոր գրող ու հասարակական գործիչ Լաստիկը, որը Մատենադարանի այցելուների մատչանում գրել է. «Չկա աշխարհում մեկ ուրիշ ժողովուրդ, որն այնքան շատ ցուրտ աշխարհով մեկ, բայց և այնքան լավ հավաքել իր գրքերն ի մի»: Մատենադարանում պահվող ձեռագրերը գրված են մեր մտորակի ամենատարբեր հորիզոնների տակ:

Հին ձեռագիրն այն եզակի հարստությունն է, որն այլևս ոչ ոչ չի կարելի փոխարինել: Հին ձեռագրերը նորից չեն գրվի: Գրանով է բացատրվում այն բացառիկ ուշադրությունը, որ հայերեն կառավարությունը ցուցաբերում է մեր ժողովրդի անփոխարինելի գանձերի նկատմամբ: Մատենադարանը Մուլտաական Միության միակ գրասրահն է, որը կառուցված է հատկապես ձեռագրերի պահպանության նպատակով: Այստեղ ստեղծված են բոլոր հնարավորությունները ձեռագրերի կյանքը երկարացնելու համար: Հատուկ միկրոֆոտոգրաֆիկան-թիմիական լաբորատորիան մշակում է ձեռագրերն ամրացնող ու հիվանդությունները կանխող նորանոր զեղամիջոցներ, առանձին անհրաժեշտ հարմարեցված կոնզերվացիոն սարքավորումներն ապահովում են բարենպաստ կլիմա ձեռագրերի համար, վերանորոգման բաժինը նորոգում ու բուժում է վիրավոր ձեռագրերը, միկրոդոսանկարչական լաբորատորիան հատուկ ժապավենի վրա է նկարահանում և բազմաշնում ձեռագրերի պատճենները, որպեսզի ձեռագրերի փոխարեն օգտագործվեն նրանց լուսատպանները և գրանով ձեռագրերը զերմ մնան մաշվելուց:

Ավանդությունը պատմում է, որ երբ աստված հող էր բաժանում հայերն ուշացան: Մնացել էր միայն մի կտոր բարբարոս երկիր: Աստված դա ավելց հայերին և ասաց՝ եթե կարողանար այս բարբարոս վրա ապրել կապրեր հավերժ, որովհետև ոչ ոք չի ցանկանա ձեզանից բար խել...

Այսպես է պատմում ավանդությունը: Բայց այդպես չենթացավ բարբարոս Հայաստանի պատմությունը: Հենց որ ժողովուրդը հայ ձեռքի տակ բարբար վերափոխվեցին պտղաբեր այգեստանների ու ոսկեհասկ արտերի իսկույն հայանվեցին մեր փոքրիկ երկիրը համբարձակել ցանկացողները: Եվ սկսվեց արյունառ ու եղեմնական մի գոտեմարտ, որ պետք է տևեր դարեր ու դարեր...

Սակայն այն ժողովուրդը, որ կարողացավ բարից հաց ստանալ՝ կարողացավ նաև բարը զենք դարձնել: Ամբողջներ կառուցեց հսկայական որձաբարձրով և բարձրաբեր լեռներից ժայռեր գործեց թշնամու վրա, տաճարներ կառուցեց սրբատաշ բարերով և մագաղաթյա մատյաններ գրեց տաճարների խուցերում: Մագաղաթների վրա եղիչներ գրողների վարդանանց հետոսամարտ, ետրեկանցի կոչեց պաշտպանել բարբարոս հողը հայոց: Մագաղաթները դարձան զենք, դարձան հավատ ժողովուրդի սկսեց հողի հետ միասին պաշտպանել նաև հավատմագաղաթները: Որքան հերոսացավ պաշտպանությունը, այնքան ավելի կատաղեց ոսոխը, այնքան ավելի շահացավ ոչնչացնող կերբը: Գարը հաջորդեց դարին, ծնունդը՝ ոչնչացմանը: Այս դարերի խորքից եկավ, սերունդներին հասավ մագաղաթների մի հոգրազոր բանակ, որ այժմ իր մեծ ու փոքր վրաններն է խփել աշխարհի տարբեր ծագերում...

արգեն վաղուց համաշխարհային նախնաքնն են գտել: Հայ պատմիչների զբբերում պահպանվել են տեղեկություններ, Հայաստանից բայի, նաև մի շարք այլ երկրների մասին: Առանց հայկական սկզբնաղբյուրների անհնարին է ուսումնասիրել Վրաստանի, Ադրբեջանի, Աղվանի, Իրանի, արաբների, սելջուկների, մոնղոլների ամբողջական գիտական պատմությունը:

Մատենադարանում պահվում են շուրջ ութսուն հայ պատմիչների, երեսուն միջնադարյան փիլիսոփաների, հարյուրավոր տաղասացների, նկարիչների և այլոց գործեր: Տիեզերագետ Անանիա Շիրակացին 1.300 տարի առաջ գրել է երկիր զննածն լինելու մասին, բացատրել է Արևի և Լուսնի խավարման պատճառները, 12-րդ դարի բժիշկ Մխիթար Հերացին կազմել է մինչև օրս էլ կիրառելի զեղատոմսեր, Մարտիրոս Երզնկացին 15-րդ դարում ձեռնարկել է շուրջերկրյա ճանապարհորդության և ոտքով հասել մինչև Խոսյանիա, 67 օր անընդհատ նավարկել է Ատլանտյան օվկիանոսում (այդ նույն օրերին Ատլանտյան օվկիանոսում նավարկում էր նաև Քրիստափոր Կոլումբոսը): Մատթեոս Ջուղայցին շուրջ դար առաջ հայտնել է, որ մարդն սկզբում եղել է շորքոտանի և մարդ է դարձել աշխատանքի շնորհիվ...

Հայ միջնադարյան գիտության այս փառահեղ նվաճումների մասին վկայող մատյանների կողքին Մատենադարանում պահվում են մեր թարգմանական մտքի անզուգական զոհարները: Հին հայ թարգմանիչ գիտնականները փրկապետել են բազմաթիվ լեզուների և հայերենի թարգմանիչ գիտության, արվեստի ու մշակույթի լավագույն ներմուծները: Բավական է ասել, որ շուրջ 300 ձեռագրեր պարունակում են հույն հռչակավոր փիլիսոփա Արիստոտելի երկերը: Ըստ որում հայերեն թարգմանություններից մի բանիսր՝ պահպանվել են ավելի հին ձեռագրերում, բան հունարեն բնագրի մեկ հատած ձեռագրերն են: Մատենադարանի ձեռագրերում Արիստոտելի որոշ մտքեր ավելի անազարտ են պահպանվել, բան հույն գրիչների ձեռքով հետագայում ազդված բնագրերում:

Մատենադարանի ձեռագրերի հիման վրա ստեղծված հատուկ ինստիտուտը՝ Հայկական ՍՍՏ Մինիստրների սովետին առնվելով Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, հանապազօրյա քրոնաչափ աշխատանք է կատարում ձեռագրերի հայթայթման, պահպանման և հրատարակության ուղղությամբ: Այստեղ ուսումնասիրվում և հրատարակվում են մեր նախնիների մտքի ու ձեռքի վաստակները, թարգմանվում և ռուսերենի միջոցով ավելի լայն տարածում են ստանում հայկական սկզբնաղբյուրները:

Յուրաքանչյուր հին ձեռագիր տվյալ ժողովրդի բազմաթիվությունն ապահովում էր շուրջ տվյալ մի անձնագիր է: Որքան շատ գիրք ունի ժողովուրդը, այնքան շատ ու ու միջոց է տրամադրել

Գեղորդ ԱՐԳԱՐՅԱՆ

Advertisement for 'ԳԻՐԸ ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ' (The Book of Linearity). It features a stylized illustration of a person sitting at a desk with a lamp, and a large banner above them with the text 'ՎԻՃԵԼ ԻՆԵՐՈՒՄՅԱԼ' (Inner World). Below the illustration, the text 'ԳԻՐԸ ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ' is written in large, bold letters. At the bottom, there is a small signature 'Վ. Իսկանյան'.

(Ավերջ՝ մեր բերքի հետ) Մուշեղ Մամիկոնեցի տերը կանգնած փորձառու աչքը մարտադաշտին պատվաբե կողքին ինչ-որ բազավոր կար կամ մարդիկ: Հրաման գոչելով, սուրհանդես սրանցով իր կամքն էր հասցնում կովից երակներում եփ էր տալիս: Եվ այդ եվ արդեն ղովարոքամբ էր սպասում, վորով ճակատ-ճակատի խփվելու հրաման — Ժամն է երկի, — ասաց մեկը բարձրաձայն: Մուշեղ իշխանը խեղ նայեց, չինաց սպասեց քիչ էլ, մինչև մտո մնաց, որ ու սորոնն վանակներին խոսքը: Հեղեց ցամաքած շուրքերը և գոչեց նախ ապա ասաց բարձրաձայն և ձեռքը սեղծ — Այրու՛մի... Անա՛-ա՛շ... Նույն խոսքն արժանավորվեց հրամանաբերին կենիխ, և գումարովեց երկրորդ արձագանքին: Ընծ հորեղայրը ելավ կանգնեց աստիճանի վրա — Անա՛-ա՛շ... Այնն փնազործ վարպետը, Բեն-բեն — ձանապաղի... Ինչույն հարյուր տեղից ձեռք բանալոց նետաձիվների սովոր պարխալը: Ձեղբերով տարավ չափ ընկած այրուց զեղաց: Ու հողմ բարձրացավ: Ու այդ ընկ ասով ձիավոր հայոց զեղի համար — Չա՛-ա՛-ա՛րի... — Չա՛-ա՛-ա՛րի... Ոչ տորեց արագ աստակացող մի

ԵՐԱՋԸ ԵՐԱՋ ՉԻ ՄՆԱ ԱՅԼԵՎԱ

Հայեպի Նաճարյան-Կյուպենկյան երկրորդական վարժարանի աշակերտական տարեգրքում մի տարի առաջ կարդացել էի հուպիչ մի գրվածք՝ «Ա՛խ, երազ էր...» վերնագրով: Աշակերտուհի Ռիբա Սյուլախյանը տրտմությամբ շարձված տողերով նկարագրում էր իր կարոտը հայրենիքի նկատմամբ: Փոքր տարիքից նա երազել է իր հայրենիքը, երազել է Սևանն ու Արարատը, Օշականն ու Երևանը և մի գիշեր, ի վերջո, տեսել է հիանալի մի երազ-երազում տեղափոխվել է Հայաստան: Կարճ է տևել սակայն երջանկությունը, որովհետև հանկարծակի պարթևել է և իրեն նորից գտել օտար ու ցուրտ ակնարկում:

«Ինչ կըլլար, գեթ ծամ մը ապրեի հայրենի հողին վրա: Երազս մնաց երազ, իսկ հոգիս անմխիթար»:

Այսպես էր վերջացնում Ռիբան իր գրվածքը: Այն գրված էր անկեղծ ու վարակիչ շնչով և արտահայտում էր ամեն մի հայրենաբաղձ պատանու կամ պարմանուհու հոգեխոտով ապրումները: Երևի այդ էր պատճառը, որ հեղինակի անունը տպավորվեց մտքումս:

Անցյալ օրը պետական համալսարանի հանրակացարանի սենյակներից մեկում ես հանդիպեցի այս ուսումնական տարում հայրենիք ծամանած ակյուրքահայ մեծ բովով ուսանողների և ուսանողուհիների: Արտասահմանի տարբեր երկրներից եկած այս երիտասարդներից յուրաքանչյուրը իր հետ բերել է մի գեղեցիկ երազ և ցանկանում է հայրենիքում թև ու բոխք, մարմին ու ձև տալ իր երազին:



Ազրինե Լեհեջյանը (Հորդանանից), Գևորգ Որբերյանը, Մակարչեի Ալբերտյանը (Եթովպիայից), Վահե Բոյաջյանն ու Արտեմիա Քեչիչյանը (Սիրիայից) որոշել են բժիշկ դառնալ, Ջարեհ Ասլանյանն ու Նազարեթ Ոսկինորուբյանը (Լիբանանից) և շատ ուրիշներ ինժեներ, Գևորգ Յաղուբյանը (Կիպրոսից) ճարտարապետ, Ռիբա Սյուլախյանը՝ բանասեր...
— Ռիբա Սյուլախյան... Հայեպից, Նաճարյան-Կյուպենկյան վարժարանից...
Չայնս հրճվանք է արտահայտում, վաղուց ըստպատված հարապատի հանդիպած լինելու հերձվանքը:
— Այո՛, — հաստատում է Ռիբան քիչ շփոթված, երևի պարմանալով, թե որտեղից գիտեմ իր մասին:
— Կարդացել եմ ձեր գրվածքը՝ «Ա՛խ, երազ էր...»:

— Ի՛նչ կըսեք: Նա շիկնում է, հայացքը մի պահ խոնարհում: Քիչ հետո, երբ նորից ինձ է նայում, մտեբմիկ, երջանիկ ժպիտ եմ նկատում նրա հայկական մեծ, խոհուն ու անաչքերում:
Այդ ժպիտը կարծես ասում է.
— Տեսնո՞ւմ եք, ես այլևս անմխիթար չեմ, քանի որ հայրենիք եմ եկել, քանի որ արդեն Երևանի պետական համալսարանի ուսանողուհի եմ: Երազս երազ չմնաց:

Ո՛չ, երազը չի խեղդվի այսուհետև սիյուրքահայ երիտասարդների հոգում, որովհետև աշխարհի բոլոր անկյուններից ճանապարհները ձգվում են դեպի Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևան, ուր բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ կան, դռները լայն բացած համայն հայության երիտասարդության առաջ:
ՀԱՔԵ ՎԱՐՍՅԱՆ

Մտածում է. «Այս երեք-չորսը ապավեն, մենակ չմտած շատվորի դեմ»: Բայց մնում է մենակ: Տարածություն է բանում երկու-երկու, երեք-երեք կողմը հայերին և իրեն: Գլավը ոչ մի հնարքով չի հասնում նրանց. ինքն է, իսկ շուրջը միայն սելջուկ ձիավորներ:

Հոգնում է բազում, և երբ հոգնած ուշանում է նորից վրա բերել սուրը, ծանր մի հարված գլխից պոկում է օղակաբաժնի և գլորում ոտատակ:

— Այստե՛ղ եմ, — մտտիկ կանչում է խոպուտ մի ձայն, և մի ուրիշ ձայն, որ մարդու կանչ չէ, մետաղական է, երևի ճեղքվող գրահի՝ Գլավից պոկում, կողմ է նետում նրան բոլորած սելջուկների:

Գլավը տեսնում է օգնության հասած Գրիգոր եպիսկոպոսի այլակերպված դեմքը. աչքերն ահարկու, բերանը ծուռ:

Իսկ Գրիգոր եպիսկոպոսը ողջ է, թե մեռած՝ ինքն էլ չգիտի: Ոչ մահ է պետք իրեն, ոչ կյանքի-վնեղանություն: Գլավի քիկունքն անցնելով, սրով տափակ վարկ է տալիս նրա կամբիկին, դուրս մղում օղակից: Եվ ինքը մնում է առձեռնակ մենակ, ինչպես միշտ էր՝ կովի գալուց և կովի մեջ: Իսկույն Ես շրջվելով, մտտիկ է կանգնում Գլավ վաճառականը:

Հիմա հեշտ է. երկուսով են, մեք-մեքի դարձած են սրամարտում: Եվ, թե աչ է պետք, ձախ է պետք, թե դեմք, աշխարհ մոռացած՝ նրանք սրի կատաղի վարկ են տալիս միասին: Գրիգոր եպիսկոպոսը քիչ է հարվածում սրով, թուլություն կա բազկում, ավելի շատ խփում է ձիու լանջով, ձիու ելնող-լիջող վույզ ոտքերով: Գլավ վաճառականի մտքին է՝ չքողի նրան մենակ: Ու նրա նման կանչում է անվերջ.
— Այստե՛ղ եմ... Կամ...
Ու անսպասելի երևում է թշնամու միջով առաջացող Վահրամ իշխանը:

Պատվում է տեղում Գրիգոր եպիսկոպոսը, կոկորդի չորությունը խեղդում է, չի թողնում, որ գոռա. «Ո՛ր, Վահրամ... Ե՛տ դարձիր, Վահրամ... Մի ձեռքով ո՛ր...»: Եվ նորից սրով տափակ խփում է Գլավի կամբիկին, մղում Վահրամ եղբորն ընդատաշ: Թռչում են ինքն ու Գլավը՝ տապալվող սելջուկ ձիավորին բողբոսում ուստակ և այս թուլքի պահին Գրիգոր եպիսկոպոսը սուր մի ցավ է կզում աչ ազդի մեջ:
— Մահ չէ սա, մահն ի՛նչ է, ամենքինն է: Միայն ոչ հիմա, ոչ անժամանակ, երբ ընդատաշում է Վահրամ եղբորը: Մեզ ունի լվանալու, ինչպես անմեղ արյունն են լվանում ձեռքերից: Իսկ նա՛ Վահրամը... «Ո՛ր ես գալիս...»:
— Վահրամ, — գոռում է Գրիգոր եպիսկոպոսը: — Մեքը պահիր...
Լսելով, իշխան Վահրամը սրավիր ձեռքով ձգում է նստյալ սանձը, և նմույզը ծառս եղած շուռ է գալիս: Հակամարմին սելջուկի տեղը, որ նրա քիկունքին էր նշանառու, գետնին է վարկվում, իսկ սելջուկը, վայնասելով, գլխովայր խփվում է հողին:

Գրիգոր եպիսկոպոսը վրա է գալիս սրբնաջ, կեռանում, սրով վերնից հարվածում է տապալվածին և, քափ առած, մխվում տեղավոր խուփ սելջուկների մեջ: Սրանք խուփյն օղակում են Գրիգոր եպիսկոպոսին: Արտատուր մի տարություն մտաբանում է նրա աչ կողմը: Չեղք տանում է կողին, մատներին տեսնում սեփական արյունը և... ոչինչ չի կզում այլևս:
Հիմա իրար կողքի, ետ-ետ են գնում Վահրամ իշխանն ու Գլավ վաճառականը: Տեղից պոկված, վրա է գալիս վաճառական-վոր-տեղավոր սելջուկների հեծյալ խումբը:

Իշխան Վահրամը տեսնում է. իր ու Գլավի առջև հայտնվում են Մեծ Հորեղբայրն ու մի քանի կորիճ հեծյալ, ձի հեծած Հրահառը: Սրանք փոկում են վաճառավոր և տեղավոր սելջուկների ճամփան, հասնում, սուր են վարկում նրանց տեղերին, որ միայն ձայն է մետաղից, փայտ է մնացած:

Կամ վաճառականն են վարկում, որ միայն փայտ, կամ բարակ մետաղ է՝ վրան մորթի բաշած: Եվ սրերը կայծ են տալիս, փայտ են շարդում, մորթի պատում, մետաղի կաշվիս են ընկրկում երբեմն: Ու տեսնում է, ապա, ինչպես մարտադաշտի եզրին հայտնվում են Մուշեղ իշխանի երկու թուր և ուն Սևառուն փոքր պորակաբո: Սրանք դաշտից դուրս են հանում եղբայր Գրիգորին, որ չգիտես՝ մեռած է, թե՛ միայն մտնելու վիրավոր...
Իսկ իրենք ետ-ետ են գնում, սելջուկ վաճառավոր-տեղավորներին բաշում իրենց՝ մեջ, համարյա հասնում են այն բլուրին, որտեղ կանգնած է Մամիկոնեից պորակաբ Մուշեղը: Սակայն ձի է ձուլում Մեծ Հորեղբայրը, և Վահրամն ու Գլավը նրա խոտ նետվում են այս տեղավորներին հեղձնողառաջ: Սրատում, տորոտում, անցնում են, բայց նորից տեղավոր սելջուկներ են ելնում նրանց դեմ: Իսկ սրանց և սելջուկների միջև, իր անձի պաշտպան մարդկանցով՝ հայտնվում է Հետուն:

Ինչպես ամեն անգամ բազկին դադար տալուց հետո, հիմա էլ կուչ է գալիս Մեծ Հորեղբոր սիրտը. փլվում է մի քիչ, որ մարդ է սպանելու: Բայց, իհարկե, սրտի՝ փնվոր դարձած բաժնի մտում է կատաղի ու անտարբեր: Աչքի բարթուրների ծամանակ է անցնում, թե չի անցնում, և իր ու յուրայինների բոլորը պատվող, անողոր վարկ վարկողների տեսքից՝ Մեծ Հորեղբայրը մոռանում է սրտի գոյությունը, սրով Ալավին սրով խոցելու միտքն է գրավում ուղեղը: «Յա՛հ, — գոչում է մտքում, — իսա՛ պատերազմին»:
Եվ մարդ լինելը տեղն է գալիս ծամանակավորապես, երբ իր դեմ ծեր մի սելջուկ ձիավոր է ծառանում: «Շյ-վա՛խ», — ասում է Մեծ Հորեղբայրը, միտքը բերում թլուլ Դավթի կոխիլը, նրան ընդատաշող ձեռք շինական մարդուն: Եվ մտաբերելով, ասում է ինքն իրեն՝ սրան չտեսնելու տաա, իրար չգանք նման ծախ: Ասում, թեթևաճի շուռ է գալիս և... ընկնում է տեղահար, վարմանալով, որ ինքը մեղք եկավ ձեռք սելջուկին, իսկ նա՛ այդ իմանալ չուպեց: «Թլուլ Դավթի ծամանակն էլ վերջացավ»: Այս է լինում Մեծ Հորեղբոր վերջին միտքը:

Հոգնել, տորոպիլ են հայերը: Հոգնել, բվկտվել են արդեն սելջուկները: Խիճում են, որ ծամանակ շահեն, ետ են ընկրկում հայերին քիչ էլ ուժեղառ անելու: Բայց, վերջապես, խուճապ-խուճապություն է ընկնում սելջուկ գործի քիկունքը, սրանց կովի չմտածների մեջ, որտեղ էլ արթի էմիրն է: Քանի որ գալիս, սրաբձակ մտնելում են եղբայրիկի հետ շրջանցելու գնացած հայոց հեծյալները:
Է
Այնև հայ փնվոր չկա մարտի չմտած: Կովի է իշել նաև Մամիկոնեից Մուշեղ պորակաբը, խորանում է դաշտում, իր հետ և իրենից հեռու գեղերով հայոց ամբողջ ցրվ գործը:
Սելջուկը ետ է փախչում, մամանտվում է և, քեներից պոկվելով, արդեն ճանապարհ է որոնում փախչելու:
Եվ փախչում են արդեն:
Գլուխներն ապատած, արագորեն թռչում, հեռանում են էլ արթի էմիրն ու նրան պահապան խումբը: Քամի է, որ նրանց ընդատաշ է վազում արևելքից, էլ արթի: Չիքի գլուխները դարձնում, սրանց հետքով են վարում միայն սրավիր սելջուկները, իսկ ոտալորը վազում է, ցրվում դաշտով մեկ:
Այս վայրի ճողոպտման մեջ, համարյա գետնափին, Մուշեղ Մամիկոնյանը տեսնում է Հետուի բվկտված կարմիր քիկունքը: Այդ բազավոր համարվող Հետուին ու նրանց, որ անհավանալի, անխմանալի մարդիկ էին, հետոյից-հետո, հաճախ և շատ մոտիկ՝ իր նրա թագավոր անձին պահապան... Չարկում են, վարկվում են: Հետուն կատաղի է կովում:
Մամիկոնեից տեղն առձեռնակ պատում է ձիու խենք ընթացքը: Պահում են բոլորը: Եվ Մուշեղ իշխանը տեսնում է զորքին իր ետևից, երբ գետավից ձայն է հասնում Հետուի

կորուստն ազդարարող.

— Թագավորն ընկա՛ւ-ա՛ւ-վ...
Վահրամ իշխանը տեսնում է այս, հասկանում է Մամիկոնյան տիրոջ արարքը, ցավ է ցավում գոռալու չափ: Եվ կատաղություն պալով, ձին հանում է Մամիկոնյան տիրոջ մոտիկությունից, սուրում, նետվում է մի կողմ, ընկնում այդ կողմով ճողոպտող սելջուկների բաց երախը: Վահրամ իշխանի աչքի առջև կենդանի կանգնում է իր հրեշտակ Միավորիկը, ձայն է գալիս, հուլունքեղեն փշրվում ականջի տակ. «Հայրի՛կ...»: Իշխանը շուրթերին կզում է արյան տհաճ համը: Հետո հող է լցվում բերանը, և աշխարհը դառնում է արյամբ շաղախված հող ու կարմիր մշուշ...
Է

Գլավի Վահրամ իշխանն է սլանում Ավետիքը, գալիս է նրան գետնից բարձրացնելու, բայց Գլավին է տեսնում: Անսաղավարտ նստած ձիուն, քամրի կապն է ուղղում Գլավը: Եվ նկատում է գետնին տապալված մի սելջուկի, որ նետն աղեղեն լարել, անա, բաց է արձակելու Գլավի վրին: Ավետիքը ձին թշում, գոռում է.
— Գլավ... — Ու ցատկում, կանգնում է իր նստյալի մեջքին, ձեռքի վրա վաճառվող պատվարում աղեղից պոկված նետի ճամփան:
Չնկում է նետը վաճառի պողպատ երեսին:
— Ավետի՛ք, — ապուշ ծիծաղում է Գլավը...
Է

Մուշեղ պորակաբը, գետնին անցնելով, բարձրանում է ասպանդակին և հրաման է արձակում ճողոպտող թշնամուն հետամուտ լինելու. գնալու աչ ու ախյակ փախչողների հետքով, իրենց եկած ճամփան տորոպ ու հիմա էլ արագորեն հետքով, և նրանց հետքով, ովքեր մղորվել-մնացել են հայոց վորքի քիկունքում:
Քիկունքում մղորվածների հետքը բնում, կողք-կողքի վարզում են Ավետիքը, Հրահառը, Գլավ վաճառականը և Ռիստատուրը: Թռչում են տաքացած, մտածում են կարճ հատող արահետներով ընթանալ և փախուստափախույց լինել:
... Գնալուց առաջ Ավետիքը գլխաբաց կանգնում է նաև արի առջև: Սա շուր է տալիս, նա խմում է, չուրը ծարավ չուրքից աստա բաժվում է կրծքին: Նաևարը շնչում է բրբռացող շնչով. ոտքից գլուխ և այլ հայացքով, կնոջ հիացքով է նայում Ավետիքին:
Իսկ Ավետիքն ի՛նչ իմանա, թե ցավ կա նաև այդ հայացքի մեջ, մի մշտական տագնապ, որ ծամանակ առաջ նրան է տվել դաման ճակատազիրը...
— Այս էլ գնամ ու գամ, փոխա սուսեն քեզ, — տաք շշնջում է Ավետիքը և թռչում է ձիու քամրին:
Նաևարը գլխով է անում նրա գնալուց հետո, շնչում է արագ: Եվ շուրջն ավելի է հաճախանում, երբ մոտ է գալիս Զմբուխը:
— Չէ, Ավետիքին մահ չկա, — չոր ասում է Նաևարը:
Եվ ավելի չոր ու չարացած՝ Զմբուխան է ասում արդեն ասածը.
— Մեռած չէ իմ եղբայր Թուխմանուկը, գերի է բո փոխարեն...
Է

Ճակատամարտից հետո մի տնքացող դաշտ է մտացել երկնքի հոգնած աչքի դեմ: Ոտատակ բվկտված դաշտ՝ մեռածով, վիրավորով, ուն Սևառունը ենթադա մարդկանցով, մոտիկ շենքից հավաքված կնարմատով: Այս բոլորի մեջ են, միասին վիրավոր են հավաքում բժշկության տեղյակ մարդիկ, խոցաղեղ դեղուներ: Եվ նաևար կարգավորը: Եվ ողբասաց երկ՝ ձեռ գուսան ու ձայնարկու կանայք:
(Շարունակելի)

ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՀԱՄԵՐԳ

Հայֆիլմարմունիայի համերգալիսն մեծ զանգվածում երեք ժամ շարունակ...

Հայֆիլմարմունիայի նորաստեղծ երիտասարդական քառյակը...

Երևանում հյուրընկալվող բեյ-րութաճայ երգչուհի Արիֆին Փեն-լիփունյանը...

Երգչուհի Լուսինե Զարարյանի «Գարուն ա», «Կապույտ» երգերը...

Հանրային կուլտուրայի վաստակավոր արտիստուհի Քամար Գեմուրյանը...

Բուսն ծաղիկի ուղեկցությամբ բեմաճարձակ է մտնում փառաբանված երգչուհի Գոհար Գասպարյանը...

Փողոցի զերսան Բարկեն ներսիսյանը հատվածներ արտասանեց Պարույր Սևակի «Անլուսի զանգակատուն» պոեմից...

Կոմիտասյան այս մեծ համերգի զարդն էր Հայաստանի պետական երգչախումբը...

Հավերժ անմահ է Կոմիտասը, — սաես այս խոսքն էր դադանում բոլոր մեղեդիներից։

«ՀՈՒՆԱՍՏԱՆԻՅ ՀՈՌՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅՈՎ»

Վենետիկում, սուրբ Մարկոսի տաճարի առջև կանգնած է նշույնը...

«Հեռավոր Հայաստանից, Երեւանից, ինձնէն Մարգիս Հարությունյանը մեզ գրում է...

«Պարոն խմբագիր, ես կանոնավոր ընթերցում եմ Ձեր օրաթերթը...

«Մուրք Մարկոսի հրապարակի ձերի վազը դարերի ընթացքում», տպագրված «Ունիտա»-ի 1965 թ. հուլիսի 2-ի ուրբաթ օրվա համարի 10-րդ «Ունիտան հանգստի համար» էջում...

«Սուրբ Մարկոսի ձերը, որ Քրիստոսից առաջ երրորդ դարի հելլենիստական մշակույթի գոյությունը...

Սա չի համապատասխանում ճշմարտությանը: «Արվեստի ընդհանուր պատմություն» մեջ, որ հրատարակված է 1939 թ. Հոմանում, «Հայաստան» գլխում խալցի հեղինակ Տերեզիո Ռովերեն գրում է...

վանքի ժամանակ այդ ձերը Հունաստանից տարել է իր երկիրը և, մի քանի դար հետո, Տրդատ Բագավորը՝ նա, ով մոտ տասնինը տարի կոստանդինյից առաջ քրիստոնեությունը հայտարարեց...

Ինձնէն ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ:

(Կալինինի 45, բնակ. 26, Երեւան, Հայաստան, ՍՍՍՖՍՀՄ):

Մեր բերակից Ռինո Ակուֆարոյի հետ խորհրդակցելուց հետո, մեծ հաճույքով պատասխանում եմ Ձեր հայ նամակագրին: Նախ և առաջ մեր գոհունակությունն ենք հայտնում, որ Հայաստանում ունենք այնպիսի հետաքրքրասեր ընթերցող, ինչպիսին ինձնէն Հարությունյանն է:

Հնորիվ սուրբ Մարկոսի ձեր-

րի երկար «վազի», մենք ստանում ենք մի փաստացի ճշտում մեր հեռավոր «գրաբնակից», ճշտում, որ հենվելով «ավանդության» վրա, մի «փուլով» էլ երկարացնում է այդ նշանավոր Մարսյան ձերի քառյակի «վազը» Հունաստանից Հոմ, բայց Հայաստանի վրայով:

Որպեսզի լրացնեն այդ շրջագայությունը, ավելացնում ենք նաև մի «փուլ» Վենետիկից մինչև Փարիզ, որ նապոլեոնի գործն էր Վենետիկի հանրապետության տապալման ժամանակ: Միայն 1815 թվականին, երբ ֆրանսիական իմպերատորին արտաքսեցին սուրբ Հեղինե կղզին, այդ ձերը նորից «վերադարձան» Վենետիկ: Այդ ժամանակից ի վեր ձերն իրենց տեղից չեն շարժվել: Եթե չհաշվենք համաշխարհային երկու պատերազմները երբ քարցվել են պահպանելու նպատակով:

«ՈՒՆԻՏԱ», 1965 թ. սեպտեմբեր



Չորս բրոնզաձուլ ձիերը սուրբ Մարկոսի տաճարի առջև:

ԱՌՋԵՎՈՒՄ «ԱՐԱՐԱՏ»-Ն Է

Հայ ֆուտբոլիստները, Հայաստանում և աշխարհի բոլոր ծայրերում, ապրիլ-մայիս ամիսների և թերթերի միջոցով լարված հետաքրքրությունը հետևում են Երևանի «Արարատ» թիմի խաղերին, որտեղ հաղթանակներ են նրան հաջանալիներով, տիրում անհաղթելիություններին:

Երկու տարի առաջ «Արարատ»-ը հրաժարվեց իր երկրպագուներին՝ Սովետական Միության ֆուտբոլի ուժեղագույն թիմերի շարքից իրենցով երկրորդական մակարդակի Անյոնդ երկու տարիներին ճարգական լարված միջոցներ արդյունք չափեցին: Շատ մոտ լինելով հանգիստ, հաջողություններ վերջին պահին չէր ծագում, և «Արարատ»-ը մնում էր առաջնության հրմեական պայքարից դուրս:

Սկսվելից 1965 թվականի ֆուտբոլային շրջանը, Չեխոսլովակիայի մրցումները կարծես լավ բան չէին խոստանում: Բարձր հրավիրված հայտնի ճարգի Ա. Չալյանը բազմաթիվ երիտասարդներ էր բեզդրելի թիմում, և նրան փորձաշրջանը երկարում էր: Առաջին հանդիպումները տխուր տպավորություն էին թողնում, իսկ կորցրած չորսբանջյուր միավոր կարող էր նախատարանի լինել:

Գոյություն էր նաև երկրի առաջնության կարգը: Երկրորդ ենթախումբը բաժանված էր երկու խմբավորման, չորսբանջյուրում 16 թիմ: Այս թիմերը շրջանային ձևով պետք է մրցեին (երկուական խաղ) իրար հետ: Երկու խմբավորումներից առաջին ութ տեղերը զբաղեցրել էր «Արարատ»-ը:

«Արարատ»-ի ֆուտբոլիստները անհաղթ ստարտից հետո սկսեցին կայունանալ, իսկ հետագայում էլ զանազորներն արձրանալ աշխուսակի սանդղակներից:

Շուտով թիմի վերջնական կազմը կայունացավ: Հարձակվողները սկսեցին ավելի համարձակ նետվել գոլի, կիսապաշտպանները խելացի կապ ստեղծել պաշտպանության և հարձակման միջև, իսկ պաշտպանները՝ զարգացրեցին անհաղթ ստարտից հետո սկսեցին կայունանալ, իսկ հետագայում էլ զանազորներն արձրանալ աշխուսակի սանդղակներից:

Հայաստանում և աշխարհի բոլոր ծայրերում հետևում են «Արարատ»-ի խաղերին, 1966 թվականին նրան կանանն ավելագույններին՝ Սովետական Միության ֆուտբոլի ուժեղագույն թիմերի շարքում: «Արարատ»-ը կարող է այդ տեղի, նա ունի անհրաժեշտ ուժը: Անույն պարտավորեցնում է Արարատը պարտավորեցնում է:

ԽՄԲԱԳԻՐ՝ Վահագն ԴԱՎԹՅԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻՎ.— Գոհար ԳԱՍՊԱՐՅԱՆ, Էդվարդ ԹՈՓՉՅԱՆ, Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Վարդգես ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ, Մորուս ՀԱՄԱԹՅԱՆ, Վարդգես ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մարտիրոս ՍԱՐՅԱՆ, Պարույր ՍԵՎԱԿ:

ՓՆՏՐՈՒՄ ԵՆԷ
Մեր հորեղբոր երկու աղջիկներին՝ Ազատուն և Մայրիկին:
Ազատունին ծնվել է 1907-ին, իսկ Մայրիկը՝ 1909-ին Վանի նահանգի Շատախ գավառի Քաղավանդում: Նրանց մոր անունը Մարթնա է, հոր անունը՝ Քերո Աղիզյան:
1915 թվին գաղթի ճանապարհին հայ կամավորները Վանից նրանց բերել են Երևան և հանձնել մի հայ կնոջ:
Ուրբեր գիտեն նրանց տեղը, խնդրում ենք հայտնել մեզ հետևյալ հասցեով: Անուշ, Նվարդ Հայրապետի Աղիզյաններ:
Հայկական ՍՍՌ, ք. Էջմիածին, Կալինինի փողոց Ո՛ 5 կամ Մարիամ Աղիզի Զարարյան
Հայկական ՍՍՌ, Երևան, Չրաշատ փողոց, Ո՛ 82



— Լուսինը շատ մեծ է: Նա կարող է տեղավորել միլիոնավոր մարդկանց, — երեխաներին պատմում էր ուսուցիչը:

Անպատկերոն կրույցն ընդհատեց Վարդանիկը:

— Իսկ ո՞ր էն գնում մարդիկ, երբ լուսինը կիսալուսին է դառնում:

Վարդանիկն ասաց իր ուսուցչուն:

— Ես չեմ ուզում ձեզ վշտացնել, բայց հայրիկս ասաց, որ եթե իմ քվանտները էլի վատ լինեն, ապա նա ստիպված կլինի ինչ-որ մեկին մի լավ ձեռ տալ:

Վարդանիկը մայրիկի հետ գալանալոց գնաց: Նրանք տեսան սիրամարգին, որ իջեցրել էր պուշը: Վարդանիկը վարմացած բացակայեց:

— Մայրիկ, նայիր, թե ինչ զեղեցիկ է ծաղկել հավը:

Վարդանիկ, ես արդեն քանի անգամ քեզ ասել եմ, որ գնա քնելու: Քո տարիքում ես քուն էի մտնում հավերի հետ, — ասաց Վարդանիկի քեռին:

— Բայց, քեռի, դուք ինչպե՞ս էիք տեղավորում հավերի քանի:

Հոկտեմբերի 27-ին, երեկոյան ժամը 7-ին, Երևանի այլումիերի գործարանի կուլտուրայի պալատում տեղի կունենա հանդիսավոր ժողով եմիլիված նոր Արարկիի հիմնադրման 40-ամյակին: ՀՈՒՆԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ